Նվիրիր հույս

Բյուջե

Նպատակը

Ապահովել Օկտագամ դեղամիջոցի կենսական նշանակության մեկանգամյա դեղաչափ՝ քրոնիկ հիվանդություն ունեցող 27 երեխայի համար

Նկարագրություն

Հայաստանում բազմաթիվ երեխաներ ունեն ծանր նյարդաբանական, ռևմատոլոգիական, արյունաբանական և իմունոլոգիական հիվանդություններ, որոնց բուժման համար անհրաժեշտ է Օկտագամ՝ կենսական նշանակություն ունեցող ներերակային իմունոգլոբուլին (IVIG):

Մարդու դոնորական պլազմայից ստացվող այս դեղամիջոցն ապահովում է պատրաստի պաշտպանիչ հակամարմիններ, որոնք կարգավորում են իմունային համակարգի անոմալ արձագանքները: Այն հաճախ միակ միջոցն է երեխայի վիճակը կայունացնելու համար, որպեսզի հնարավոր լինի սկսել հետագա բուժումը:

Թեև ՀՀ առողջապահության նախարարությունը որոշ հիվանդությունների դեպքում տրամադրում է նշված դեղորայքը, այնուամենայնիվ, առկա են որոշ հիվանդություններ, երբ դեղամիջոցը պետք է ներարկվի հաշված ժամերի ընթացքում և այս դեպքում նախարարությունը դեռևս չի տրամադրում այն: Նման օրհասական պահերին Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամը (HFC Armenia) ստանձնում է աջակցությունը՝ երաշխավորելով, որ ոչ մի երեխա չի զրկվի բուժումից: Առանց այս միջամտության, դեղամիջոցի չափազանց բարձր արժեքը այն անհասանելի է դարձնում ընտանիքների մեծ մասի համար:

Յուրաքանչյուր տարի Հիմնադրամն Օկտագամ է տրամադրում շուրջ 40 երեխայի՝ լրացնելով կենսական նշանակության այդ բացը: Այժմ, համագործակցելով մեր նվիրատուների հետ, «Այո»-ն (Ayo!) նպատակ ունի ապահովել այս կարևոր դեղամիջոցը հնարավորինս շատ երեխաների համար: Այս ծրագրին կարող եք կատարել նվիրաբերություն ամբողջ տարվա ընթացքում:

Նշում, «Օկտագամ» դեղամիջոցը տրամադրվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հետևյալ հիվանդությունների դեպքում՝
Առաջնային իմունոդեֆիցիտ
Նյարդաբանական խնդիրներ (Գիյեն-Բարեի համախտանիշ)
Կավասակիի հիվանդություն

Բյուջե

Նշում	Գին (ՀՀ դրամ)
Օկտագամի ձեռքբերում	28,980,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար
= 380 ՀՀ դրամ

₦28,980,000